

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԲԺԻՇԿՆԵՐԻ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳ

Նպատակ և հիմք

Էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական համակարգում (այսուհետ՝ Էլեկտրոնային առողջապահության համակարգ) օգտատերերի գրանցումն իրականացվում է բացառապես նույնականացման քարտերի միջոցով՝ ապահովելու նրանց խիստ նույնականացումը: Սույն կարգի նպատակը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող, հետևաբար՝ նույնականացման քարտի կիրառմամբ Էլեկտրոնային առողջապահության համակարգում գրանցվելու հնարավորություն չունեցող այն բժիշկների գրանցումը հնարավոր դարձնելն է, ովքեր փաստացի աշխատում են Հայաստանի Հանրապետության բժշկական հաստատություններում և ծառայություններ են մատուցում:

Սույն կարգը մշակվել է՝ հիմք ընդունելով առողջապահության նախարարի 2020 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող, սակայն Հայաստանի Հանրապետության բժշկական հաստատություններում փաստացի աշխատող և ծառայություն մատուցող բժիշկների նույնականացման և գրանցման ընթացակարգի մասին» թիվ 324-Ա հրամանը:

Նույնականացման և գրանցման ընթացակարգ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող, սակայն Հայաստանի Հանրապետության բժշկական հաստատություններում փաստացի աշխատող և ծառայություն մատուցող բժիշկը (այսուհետ՝ **դիմող**) մոտենում է «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ գրասենյակ անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:
2. «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ գործառնական բաժնի համապատասխան աշխատակիցը (այսուհետ՝ **սպասարկող աշխատակից**) դիմողին տրամադրում է գրանցման դիմումի օրինակելի ձևը:
3. Դիմողը լրացնում և ստորագրում է գրանցման դիմումի օրինակելի ձևը:
4. Սպասարկող աշխատակիցն այնուհետև ստուգում է անձնագրի վավերականությունը՝ դրանում նշված վավերականության ժամկետի հիման վրա:
5. Այնուհետև սպասարկող աշխատակիցը դիմողին նույնականացնում է՝ անձնագրի նկարի հիման վրա:
6. Դիմողին նույնականացնելուց հետո սպասարկող աշխատակիցը ստուգում է դիմումը: Լրացված տվյալներում սխալներ հայտնաբերվելու դեպքում լրացվում է նոր դիմում:

7. Անձնագիրը ստուգելուց և դիմողին նույնականացնելուց հետո սպասարկող աշխատակիցը ստուգում է դիմողի քաղաքացիությունը և տվյալները՝ հարցում անելով ՀՀ Բնակչության պետական ռեգիստր:
8. Բնակչության պետական ռեգիստրում դիմողի տվյալները ստուգելուց հետո սպասարկող աշխատակիցը ստուգում է դիմողի՝ դիմումի մեջ նշված աշխատավայրի և հաստիքի համապատասխանությունը էլեկտրոնային առողջապահության համակարգում գրանցված տվյալների հետ:
9. Դիմողի աշխատավայրը և հաստիքը ստուգելուց հետո սպասարկող աշխատակիցը դիմողին գրանցում է էլեկտրոնային առողջապահության համակարգում:
10. Գրանցման պահին դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին ինքնաշխատ կերպով ուղարկվում է հղում, որի վրա սեղմելով՝ բացված պատուհանում դիմողը լրացնում է իր գաղտնաբառը: Գաղտնաբառը լրացնելուց հետո գրանցումը համարվում է բարեհաջող կատարված:
11. Գրանցումից հետո սպասարկող աշխատակիցը տեսախցիկով նկարում է դիմողի դեմքը և պատճենահանում (կամ լուսապատճենում) անձնագիրը:
12. Եթե գրանցման քայլերից որևէ մեկը հաջողությամբ չի կատարվում (նկարով նույնականացնելու անհնարինություն, տվյալների անհամապատասխանություն և այլն), գրանցումը մերժվում է, որի վերաբերյալ սպասարկող աշխատակիցը նշում է կատարում գրանցման դիմումի համապատասխան դաշտում՝ լրացնելով նաև մերժման հիմքը:
13. Գրանցումը բարեհաջող կատարվելուց հետո սպասարկող աշխատակիցը դրա վերաբերյալ նշում է կատարում գրանցման դիմումի համապատասխան դաշտում:
14. Գրանցման կամ դրա մերժման մասին նշում կատարելուց հետո սպասարկող աշխատակիցը ստորագրում է դիմումը՝ նշելով իր անունը և ազգանունը:
15. Դիմումը, անձնագրի պատճենը (կամ լուսապատճենը) և դիմողի նկարը պահպանվում են «էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ կողմից՝ անժամկետ, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ ժամկետ սահմանված չէ: